43. ՇԱՀ ՏՈՏԻՅԵՆ

Կէլնի, չէլնե մեյ խատ թաքավոր կէլնի:

Էսա թաքավորուն մեյ խատ սադրազամ կէլնի: Էսա սադրազամ ուր թաքավրուն շատ սիրելի կէլնի, ըսկուն որ թաքավոր ուր խազինեն բիթյուն էսա վազիրին թասլիմ կանի: Էսա վազիրին էլ մեյ խատ ախպեր կէլնի: Էսա ախպերն ի, կուզի ինքյն էլնի վազիր, իտոր խամար միանա կփտոեր, որ ուր ախպոր թաքավորու ուչկիս խաներ:

Ավուր մեկ գյողեր կմտնեն էսա թաքավորու խազինեն, ենտեղ մեյ խատ անթիկա ոսկի թաքյ կէլնի՝ կգյողնան, կտանեն:

Թաքավորն ի, որ էսա պան կլսի, շատ մառախ կանի, ուր վազիրի վերեն շֆա չէր տանի, ամա անթիկա թաքյ ի, մոմուռն էլ ուր սուրիս չէր կտրի:

Սադրազամի ախպերն ի, որ էսա պան կլսի, շատ կուրախնա: Կէրթա թաքավրու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, տյու քյո խազինեն թասլիմ արիր իր քյո վազիրին, որ քյո վազիրի մատ էսս գյուղութենի մեչ չէլներ, խավքյն ուր թիվով, օյն իւր պոռտով չէր կանա քյո խազինեն ոտ կոխե: Թաքավոր ապրած կենաս, - կասի, - տյու իսկի թայըմին չես արե, որ քյո սադրազամ ըս տարի թազա քյեռշկ-սարե մ'ի կայնըցուցե, որ մարթու պերան պայ կմնա: Իսկի խառցուցե՞ր ես, թե էսականդար ծախք մասրիֆ կանի, տարեն ո՞ր տեղեն ի: Ես սկուն կիտեմ որ, կա, չկա քյո սադրազամի խոսկ գյողերաց խետ մեկ ի արե, թաքյ գյողեր ին՝ տարեր ին ծախեր ին, տարեն պիրեր ի սադրազամ, էսա քյեռշկ-սարեն կշինի:

Թաքավորն ի, էսա պան որ կլսի, մեյ խատ տյուշյումիշ կէլնի, կասի. - Վալա, էսա մարթ հաղ ունի, ես ի՞նչխ էսականդար օր ֆառկուն չէլեր ի:

Էսա թաքավորն ի, ամր կանի, որ սադրազամի գյլոխ զանին, ինոր շինած թազա քյեռշկ-սարեն էլ կզավթի, կուտա սադրազամի ախպոր, ինորն էլ կանի ուր սադրազամ:

Խին սադրազամին մեյ խատ լաճ կէլնի, մեյ խատ էլ կնիկ, ինոնց էլ դյուս կանի:

Էսա սադրազամի լաճն ի, կառնի ուր մեր, կէրթա քյաղքյի մեկ քյունջ՝ պլպլուկ տուն կպռնին, էնտեղ կապրին:

Իսոնքյ շատ կֆուկարանան, ըսկուն որ էսա լաճ բիթյուն օր կէրթա դաշտ, փետ կժողվի, կպիրի քյաղաքյ, կծախի, իւրրով՝ զեորեով ուրենց իտարեն կանեն:

Էն մեկ շապթուն մեր լաճուն կասի. - Բալամ, էսօր ես էլ գյամ խետ քյե՛, վաղ կիրակի յի, պալքյի շատ ցախ պիրենքյ: Կիրակի յի, մի պանե, մեղքյ ի:

Լաճն ի, մոր խապրից չէլնե: Չվան կառնի մոր խետ կէրթան դաշտ: Կէրթան կխասնեն դաշտ, կպաշլային ցախ-պան ժողվել, պանջար քյաղիլ: Վարհասլ, չյուր հան-հիւն՝ կմթնի, կիշեր կուտա վերեն: Էլ չեն կանա փառնա տուն: Կիշեր կմնան դաշտ: Կիշեր ցախ կվառին, կնստին կրակի մոտ չյուր լոս:

Տղեն ի, կէլնի վեր, կուզի քիչ մ' ուռուճանա էնտեղ ծառի տակ ճյուր թափելու: Կէլնի վեր կէրթա, որ ճյուր թափի, կտիսնա որ երկնուց աստղերաց պես պսպղուն կլոր-կլոր պաներ կթափի վեր ուր գյլխուն: Կկզվի գյետին, մեկ-էրկու խատ ժողվի, կառնի վազեվազ կտանի ուր մոր շանց կուտա, կասի. - Մարե, իրիշկա տես, էսա ինչ խորոտ ուլնիկ ին:

Մերն ի, որ էսա ուլնկներ կտիսնա, լաճուն կասի. - Բալամ, իսոնք որտեղեն պիրիցիր:

Լաճն ի, կասի. - Մարե, ես նստիր ի էնա ծառի տակ, ճյուր կթափի, տեսա որ երկնուց էսա ուլնկներ կթափին վեր իմ գյլխուն: Ես էսա մեկ-էրկու խատ ժողվի պիրի, ասի՝ տանեմ մամեն տեսնա, խենքյ ի՞նչ ին, էն մեկելներ գյեռ ալա տա են:

Մերն ի, էլ իսկի խապար չի տա, կէլնի խետ լաճուն կէրթա դռորի էն ծառի մոտ, կիրիշկա, կտիսնա որ ի՞նչ. գյետին, ծառի տակ բիթյուն փելքյ կուտա: Համան ուր փեշեր կպանա, էդա տեղ ինչ կանդար որ ուլնիկ կա, շու-շոտ կբաշլայի ժողվել: Լաճն ի, որ կտիսնա որ ուր մեր կժողվի, ինքյն էլ կբաշլայի ժողվել: Կժողվին կպոծնեն, կիրիշկան կտիսնան, որ աղոթրան բաշլայի ճողճղել:

Մերն ի, կասի. - Բալամ, էսա մե խերիք ի, զաթի լիսցավ էլ, էլ էսա ցախեր ի՞նչխ տանենքյ, չուզի, էլ չտանինքյ:

Կառնեն էտա ուլնկներ, կէրթան ուրենց տուն: Չուր կխասնեն տուն, կեսօր կտառնա, լաճն էլ կայաթ անութացե: Կխասնեն տուն, մերն ի, կասի. - Բալամ, ես կիտեմ տյու կայաթ անութի ես, առ էսա իրեք ուլնիկ, տար շուկեն, բալքյի ծախես: Որ կծախես՝ խաց-պան առ, առ արե ուտենք, ես էլ անութի իմ:

Լաճն ի, կառնի իրեքյ ուլնիկ, կէրթա շուկեն, որ ծախի: Մերն ի, կտիսնա որ լաճ անգյնցավ, էն մեկել ուլնկներ կլցի բիթյուն էլ ուր գյույինոցի մեչ, կառնի կէրթա փոխցի մեյ պուճախ կխորի:

Տղեն ի, կառնի էտա իրեքյ ուլնկներ, կէրթա շուկեն որ ծախի: Էն

թարաֆիկ մեյ խատ յահուրի մ' էսա ուլնկներ կտիսնա, զատամանց կվազի կուգյա էսա լաճու մոտ, կասի. - Տղա՛, էտա ուլնիկ ծախու՞ յի:

Տղեն կասի. - Խա, ծախու յի, քյանի՞ կառնես:

Յահուտին ի, կասի. - Ի՞նչ կուզես:

Լաճն ի, կասի. - Ի՞նչ կուտաս:

Յահուտին ի, կասի. - Քյե տաս խատ տեղին ոսկի կուտամ:

Էսա լաճն ի, որ տաս վուսկու ծեն կառնի, ուր մեչ կասի. «Էսա թռանա՞ կանի զիկ, ի՞նչ ի»: Էսա յահուտու վերեն կպարկանա, կասի. - Ջայինում էլի կնա, ես քյո խաղալի՞ք իմ, ի՞նչ իմ:

Յահուտին ի, կասի. - Աղեկ, ինչի՞ կպարկանաս, քսան ոսկի տամ:

Տղեն գյինա կպարկանա, կասի. - Չեմ իտա:

Էսա յահուտին ի, կասի. - Առ քյե եոսուն ոսկի:

Լաճու ճար կկտրի, կտիսնա որ չէ, էսա մարթ աղորթմանց առնող ի, կասի. - Քյո միտկ քյանի յի, գյին քանի՞ յի, տյու կիտես գյին, տուր՝ տամ:

Յահուտին ի, կասի. - Քյե մեյ խապար հ'իսուն ոսկի կուտամ, կուտա՞ս:

Լաճն ի, կասի. - Չտվողն էլ, չառնողն էլ:

Կասի. ուլնիկ կուտա, հ'իսուն ոսկին կառնի:

Էսա յահուտին ի, նոր կտեղշմանի ոտ ասածի վերեն, բայց նատնն սորա: Կիտեր, որ էտա տղեն էն ուլնկներաց գյին չէր կիտե առած:

Յահուտին ի, կուտա հ'իսուն ոսկին, կառնի էտա ուլնկներ, կտառնա էտա լաճուն կթամխի, կասի. - Թե որ էլմել սկնա ուլնիկ կէլնի, մարթու չի տաս, պե զիկ, ես կառնեմ:

Տղեն ի, կասի. - Աղեկ:

Կառնի հ'իսուն ոսկին, կէրթա: Կէրթա շուկից խաց, քյաբաբ, պերքյ-պարին կառնի, ուրախ-ուրախ կէրթա տուն:

Կէրթա տուն, մոր կասի. - Մարե, էսօր մեր ճան ճուկ ի, քյո տված ուլնկներանց մեյ խատ ծախեցի մենակ հ'իսուն ոսկի:

Պերած պերքյ-պարին կտոեն օրթեն, կբաշլայեն ուտել-խմել, քյեոֆ անել:

Լաճն ի, կասի. - Մարե, էլ չեմ էրթա ցախի:

Խացն ի, կուտին, կպոծնին, լաճն ի, էն մեկել ուլնկներ կառնի, կէրթա շուկեն, որ ծախի: Մեյ կառնի ծեռ, մախսյուս կպոռա. - Ուլնիկ առեք, ուլնիկ առեք:

Յահուտին ի, էսա լաճուն ծեն որ կլսի, վազեվազ կուգյա լաճու մոտ, կասի. - Մեյ խատ տիսնամ խենքյ ի՞նչ ուլնիկ ի, ես կառնեմ:

Լաճն ի, որ ուլնիկ շանց կուտա, յահուտին կճանչնա, որ ուր առած ուլնկիցն ի, կդառնա լաճուն կասի. - Թե՞ ես քյե ասի, որ էտա տիսակ ուլնիկ կէլնի, պե, ես կառնեմ, տյու ինչի՞ պիրեր ես, բիթյունին շանց կուտաս:

Դառնա կխանի հ'իսուն ոսկին կուտա, կասի՝ առ:

Լաճն ի, կասի. - Բըժժ՞, զի խաբեր ես, խարիր ոսկի կուտա՞ս, կուտամ, որ չես ի տա, չեմ ի տա:

Յահուտին կխանի հ'իսուն ոսկի էլ կդնի վեր էն հ'իսուն ոսկուն, կթմմի խարիր ոսկի, կուտա էսա լաճուն, ուլնիկ ծեռնեն կառնի:

Կդառնա լաճուն կասի. - Թե որ էլ կէլնի, բե, ես կառնեմ. մարթու չի տաս:

Լաճն ի, կտորըմ տեղ կէրթա, կդառնա եր կուգյա յահուտուն կբոռա, կասի. - Յահուտի՛, յահուտի՛, մեյ խատ էլ կա, չե՞ս առնե:

Յահուտին կդառնա կուգյա կասի. - Ու՞ր ի, խա, ես կառնեմ:

Լաճն ի, կասի. - Յահուտի, յահուտութեն մ'հանե, էլ խարիր ոսկի չեմ ի տա:

Յահուտին ի, կասի. - Ապա քյանի՞ կուտաս:

Լաճն ի, կասի. - Էրկու խարիր թանա ոսկի կուտամ, կուզես առ, կուզես մ'առնե: Մեկ պլիկ էլ որ ասես պակաս տուր՝ չեմ ի տա:

Յահուտին ի, կխանի էրկու խարիր ոսկին, կխամպրի կուտա էսա լաճու ծեռ, ուլնիկ ծեռնեն կառնի, կէրթա:

Էսա լաճն ի, կառնի ոսկիքյ, ուրախ-ուրախ կէրթա տուն, մոր կասի. - Մարե, խերիքյ ի մենքյ էսա պլպլուկ խարաբի մեչ մնանքյ: Էլի տես, որտեղ խորոտ տան տեղ կա, խող առնենքյ, տուն-տեղ շինինքյ, մարդավարի ապրենքյ:

Մերն ի, լաճու խաթր չի կոտրե, կէլնի քյանիմ խատ էլ ուլնիկ կուտա լաճուն, կասի. - Բալա՛մ, տար էս էլ ծախի, փարեն պե, որ մեյ խատ խորոտ քյո ուզածի պես քյեռշկ-սարի մը փարեն թմմի:

Լաճն ի, կառնի ուլնկներ, կէրթա շուկեն, կուտա էն յահուտուն էրկու խարրական ոսկի, փարեն կառնի, կպերի կուտա մոր:

Մերն ի, կէլնի ուր ուզած տեղ խող կառնի, կբաշլայի քյեռշկ-սարեն կայնըցուցել. մեյ տարվան մեչ կանի, կպոծնի:

Ինչ կանդար որ ըմեն պան լաճու քյեֆով էլավ, համան լաճ հա մռութ, մալուլ ի: Ավուր մեկ էսա լաճու մեր ուր տղին կխառցուցի, կասի. - Բալամ, տյու ինչի՞ հա ըսկնա մռութ ես, քյե ի՞նչ էլեր ի, քյո ի՞նչն ի պակաս որ հա տխուր, մալուլ ես:

Լաճն ի, կասի. - Մարե, ի՞նչ անեմ էն զանգյնութեն, քյանի որ նա մարթ կճանճնանքյ, նա մարթու մեչ ենքյ մտե, որ մարթ էլնենքյ:

Կդառնա մոր էլմ'էլ կասի. - Մարե, թե տյու զիկ կուզես՝ էտա ուլնկերաց մեյ քյանիմ խատ տուր, տանեմ տամ թաքավորին ատիյան, բալքյի ինոր սիրտ քյաղցրանա վեր զիկ, զի կանչի, ուր սարի մեչ բալքյի պամ տա, մենքյ էլ մարթու մեչ մտնենքյ, մարթ էլնենքյ:

Լաճու մերն ի, կասի. - Բալա՛մ, վազն արե էտա սավտից, ես կիտեմ էտա ուլնկներ մեկ օր քյո գյլխուն մեյ փորձանքյ պիտի պիրին, տյու ի՞նչ անես թաքավորու տված պան-գյոռծ, քյանի որ սաղ ես, կե, խմի քյեռֆ արա:

Մերն ի, ինչ կանդար որ կանի, չկանա վեր լաճուն, ճար կկտրի,

կէլնի մեյ խատ առծաթ թաբախ կառնի, իրեքյ խատ ուլնիկ կդնի մեչ էտա թաբխին, մեյ խատ էլ թյուլ կքաշի իրես, կուտա լաճուն, կասի. - Բալամ, դե առ տար:

Լաճն ի, կառնի էտա առծթե թաբախ, կդնի վեր գյլխուն. կառնի կէրթա թաքավորու տուն: Տանի, կդնի թաքավորու առճն: Թաքավորն ի, որ թյուլ կվերուցի՝ կտիսնա, որ առծրթե թաբախի մեչի ուլնկներ, կզարմանա, կուրախնա, էտա լաճուն կանի ուր բախչապան բաշի:

Թաքավորու վազիրն ի, որ էսա պան կտիսնա, աչիչ քյար չի տես, կասի. «Ի՞նչխ անիմ, ի՞նչխ չանիմ, որ ես իսորան կուրիսցուցիմ, համ ինոր թազա շինած քեռշկ-սարեն էլ ծեռնիցյ առնեմ»:

Էսա սադրազամն ի, շատ կմտածի, քիչ կմտածի, միտ պամ կինի: Կէլնի կէրթա դռորի թաքավորու մոտ: Կտիսնա որ թաքավոր նստեր ի վեր ուր թախթին, Միրզա-Մահմադի պիրած իրեքյ ուլնկներ պռներ ի ծեռ, կխաղա:

Էսա սադրազամն ի, գյլեռխ տալուց սորա դառնա թաքավորուն կասի.

- Թաքավոր ապրած կենաս, ես կտիսնամ, որ տյու էտա ուլնկներաց վերեն շատ ես ուրախցե: Կիտե՞ս, - կասի, - էտա ուլնկներ քյե ատիյա պիրող վո՞վ ի, քյո խազինա կտրող՝ իմ գյող ախպոր տղեն ի: Սորա կիտե՞ս, էտա ուլնկներ որ կա, էսա լաճու խեր քյո խազինիցն ի գյողցե, չյունքի ըսկնա ուլնկներ մենակ թաքավորու լայեղ պաներ ին:

Թաքավորն ի, մեյ խատ դյուշմիշ կէլնի, կասի. - Է՜յ բալքյի տա աղորթ ի:

Կէօրեռխկի մարթ կկանչի, որ գյան էրթան մեյ խատ խազինեն իրիշկան խենքյ:

Կդառնա սադրազամին կասի. - Թե որ իմ խազինիցյ էլնի, ախր իսորա նըմշիցյ մեյ խատ մնացեր ի էնդեղ:

Մարթեր կէրթան կփտռին, պան չեն կնդնե, կուգյան թաքավորուն կասեն. - Թաքավոր ապրած կենաս, քյո խազինեն շատ աչկիցինքյ, շատ փտռեցինք, էտասկնա ուլնիկ իսկի չկընդանքյ:

Թաքավորն ի, կասի. - Ես որ կիտեմ իմ խազինեն, ես էլ կիտեմ, որ էտասկնա պան չկա, ես իմ խազինի մեչ իսկի ըսկուն ուլնիկ չեմ տեսե:

Էսա պանի վերեն, թաքավորն ի, կկանչի էսա լաճուն բախչաբան բաշուց կպանցրացուցի, կանի էօդին էօդաբաշի:

Էսա թաքավորուն էլ մեյ խատ խաս բախչա կէլնի, էսա խաս բախչի մեչ աստծու ստեղծած զմեն պերքյ-պարին կկնդվի: Էլ ինչ կանդար քյեշիտ-քյեշիտ եմշի ծառ ասես, էլ ինչ կանդար գյոն-գյոն ծաղիկ ասես, բիթյուն մեչ էսա բախչին կա: Բախչի օրթեն էլ մեյ խատ մարմարե ավուզ կէլնի, մեչն էլ կաթնախամ պաղ ճյուր: Ծառերաց ճողերաց վերեն խազատանմուշ խավքեր, ըսկուն ի, որ մարթ կասես գյեռ տրախտի մեչն էլնի:

Էսա քյաղքյի մեչ մեյ խատ շատ խեղճ, ֆուկարա պառավ կնիյմ կէլնի, ինորն էլ մեյ խատ լաճ կէլնի:

Ավուր մեկ էսա աղքյատ կնգյան լաճ կխիվինդնա, յոթն օր ի, որ ինչ աչկեր խփեր ի, ծանդր կտքյա: Սեկ էլ բիրդան աչկեր կպանա, խավող կուզի: Էսա պառավ մերն ի, քյաղքյի մեչ որդեխ որ կինի՝ չի կանա մեյ չնգյոտ խավող ճարի, որ պիրի տա ուր խիվանդ լաճուն: Խաբար կառնի, որ մենակ թաքավորի խաս բախչեն կա:

Կէլնի կէրթա թաքավորու խաս բախչի բախչաբանի մոտ, կասի, - Քյե մեռնեմ, աղա, մեյ չնգյուտ խավող տուր, տանիմ իմ խիվանդ լաճուն, քյե վարցք ի:

Բախչաբան ի, կպարկանա վեր էսա կնգյան, կասի. - Ջայնամ էլի, կնա, ջաղդի պառավ: Թաքավոր կասես ուր բախչեն քյե խամար ի տնգյե:

Էսա պառավն ի, շատ աղաչանքյ կինի, ինչ լեզու որ կթափըցուցի, ճար չէլնի: Բախչաբան կպշտի, կճամխի:

Էսա պառավն ի, ճար կկտրի, ետ կդառնա կուգյա տուն լալելեն: Կուգյա կխասնի տուն, կտիսնա որ լաճ մեռեր ի: Էսա կնիկ ուր սուտի կսկծիս ետ կդառնա, կուգյա խաս բախչի առաճ, քյեռչվեր կզանի տռան առաճ, ծեռքյեր կպանա, կիրիշկա էրկինքյ, լալով կանիծի խաս բախչեն, կասի. «Խաս բախչա՛, խաս բախչա՛, տյու ինչ՞խ իմ լաճուն խասրաթամեռ արիր, ես էլ աստծուց տիլաքյ կանեմ, որ կեծել-կրակ թափի քյո գյլխուն, չորնաս, մնծրես, ծիլ-կանաչդ չորնա, չյուր Շահ Տոտիյեն վերետ չկարդա, նա խավքյ ուր թնով քյո խոդ մտնի, նա ծաղիկմ վեր ուր քյեռքյին կանանչի, քյո ախպրներաց ճյուր կտրեն, ակներ աղ թափեն, ցամքյի:

Էսա պառավու անեծկ կխասնի, մեչ մեյ թախկվան բախչեն կչորնա, կմնծրի, ախպրներ բիթյուն կցամքյեն, ծիլ-կանաչներ զմեն-զմեն կչորնասն, կինեն, կէլնի ավեր-խարաբա դաշտի պես:

Էսա բախչաբան ի, որ էսա պան կտիսնա, լեղապատառ կվազի թաքավորու մոտ, էլած-չէլած բիթյուն կպատմի:

Թաքավորն ի, որ կլսի՝ իսոր վերեն շատ կպարկանա, ամր կանի, որ բախչաբանի գյլեոխ զանեն:

Թաքավոր շատ կմտածի, կասի ինքյ ուր. «Ի՞նչխ պիտի անեմ իմ բախչեն»: Կմտածի, կմտածի կասի. «Աջեբա էն Շահի Տոտիյեն ի՞նչ պան ի, վո՞վ ի, մաշտենքյ, ո՞ր տեղն ի, վո՞վ կանա պիրի, ի՞նչխ պիտի պիրինք»: Վարհասլ, շատ կմտածի, կկանչի սադրազամին հալ-հեքյաթ բիթյուն կպատմի, կասի. - Մեյ ճար մ'անենք, բալքյի էտա Շահ Տոտիյեն պիրենք որ մեր խաս բախչեն շինի, ուրիշ էլ ճար չկա:

Սադրազամն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, մառախ մ'անե, էն ուլնիկներ պերող՝ Շահ Տոտիյեն էլ կանա պիրե:

Թաքավորն ի, էսա խաբրի վերեն կկանչի Սիրզա Մահմատին, կասի. - Սիրզա Մահմատ, տյու որ էսա ուլնկներ պիրիր, քյո մոտ հալա շատ մարիֆաթ կա: Քյեզնից կուզեմ մեյ պան. քյեզնե կուզեմ Շահ Տոտիյեն՝ որ տեղ որ ի, կնդնես պիրես, որ իմ խաս բախչի ... վերեն կարթա, որ

իմ խաս բախչեն առաճվա պես կանաչի. իսկի մեյ պան էլ պակաս չէնի: Քյե քյառսուն օր ժամանակ կուտամ. պիրիր՝ պիրիր, չպիրիր՝ քյոն էլ, քյո մոր գյլեոխն էլ կկտրեմ, ծեր տուն էլ, տեղն էլ կզավթեմ:

Սադրազամն ի, որ էսա խաբար կլսի, ուրախութեն էլ ոտկեր գյետին չտանե:

Միրզա Մահմատն ի, մռութ, մալուլ կթողնի կերթա տուն:

Սերն ի, որ կտիսնա ուր տղեն մալուլ ի, կխառսուցի. - Բալամ. քյե ի՞նչ էլեր ի, որ էտասկնա մռութ ես:

Լաճ ծեն չի խանե:

Սերն ի, էլմել կասի. - Ախր բալամ. քյե ի՞նչ էլեր ի, ես եմ քյե ծիծ տվե, ես եմ քյո շախող -պախող, տյու որ քյո սոտի տանդեր զի չասես, ապա վի՞ր պիտի ասես, քյո սոտի դարման արող ես կէլնեմ մենակ:

Սերն ի, որ շատ կինի խեստ լաճուն. լաճն էլ կբաշլայի ուր տարդ պանալ, կասի. - Մարե, հա՜լ-հեքա՜թ, թաքավորու խաս բախչեն չորսեր ի, թաքավորն էլ զիկ կանչեց, ասաց. «Որտեղ որ իսա՝ պիտի երթաս Շահ Տոտիյեն կնդնես պիրես, որ իմ խաս բախչի վերեն կարդա, որ իմ խաս բախչեն կանաչի»:

Սերն ի, կասի. - Բալամ, ես քյե չասի, թե վազն արե էտ ուլնկներաց մոտեն, մեկ օր քյո գյլխուն պիտի զուլում պիրին, տյու զիկ չլսեր, մկա տեսա՞ր: Մկա ինչ որ ի, էլածն էլեր ի, մառնխ մ'անե, ես քյե ի՞նչխ որ կասեմ, կերթաս թաքավորու մոտ սկուն էլ կասես: Կերթաս թաքավորու մոտ կասես. «Թաքավոր ապրած կենաս, քյո խաբար վեր իմ գյլխուն, համան ինչ որ ես կուզեմ, պիտի տաս, որ ես էլ քյո ուզած պիրեմ»: Կերթաս կասես. «Թաքավոր ապրած կենաս. ես կուզեմ իմ խոր ծին, իմ խոր խալվներ ինան իմ խոր սիլախներ, որ քյո սադրազամի մոտն ի, ամր արա թող տա՝ ես էլ երթամ Շահ Տոտիյեն պիրիմ»:

Առատուն Միրզա Մահմատն ի, կէլնի կերթա թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյո ուզածներ վեր իմ գյլխուն, համան մեյ պան կխնդրեմ քյիզնից:

Թաքավորն ի, կասի. - Ի՞նչ ի ուզածդ, ուզի, մի վախենա:

Միրզա Մահմատն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իմ ուզած իմ խոր ծին ի, իմ ուզած իմ խոր խալվներն ին, ինան ինոր սիլախներ, որ քյո սադրազամի մոտն ի, ամր արա, թող տաս, որ երթամ, Շահ Տոտիյեն պիրիմ:

Թաքավոր ամր կանի սադրազամին, որ Միրզա Մահմատի ուզածներն տա: Վազիրն ի, ուր մտաց մեչ կասի. «Վա՜յ քյո սովրցուցողի վիզ կոտրի»:

Ինչ ճար որ կանի, թաքավորուն չի կանա խապի: Վազիրի ճար կկտրի՝ կէլնի ուր ախպոր ծին, խալվներ ինան սիլախներ, կուտա Միրզա Մահմատին:

Միրզա Մահմատն ի, ուր խոր խալվներ կխայնի, սիլախներ կկապի, ծին կխեծնի, թաքավորուն կաց պարին կանի, կինի ճամբախ:

Շատ կէրթա, քիչ կէրթա, կէրթա կխասնի մեյ խատ քյաղաքյըմ: Իրիկուն կէլնի ծիյուն գյլեռխ կթողնի պաց, կասի. «Ծին մուրազ ի, ծին ո՛ր տեղ որ էրթա, կայնի՝ ես էլ էսա կիշեր կէրթամ էնտեղ՝ կոնախ կէլնեմ»:

Ծին ի, կէրթա կկայնի մեյ խատ պառվու տռան վերեն: Միրզա Մահմատն ի, ծիյուց կէճնի տակ, տուռ կտփի, պառավ կուգյա, տուռ կպանա:

Միրզա Մահմատն ի, կասի. - Պարև քյե, պառավ, մսաֆր կուզե՞ս:

Պառավն ի, կասի. - Աստծու պարին, բալամ, - կասի, - կոնախ որ կա՝ աստծուն ի, խազար պարեով, վեր իմ աչիչ, վեր իմ գյլխուն:

Պառավն ի, կասի. - Բալամ ինչ՞ կանդար որ կոնախ իս ինչ խանեմ որ նա ուտելու պան ունիմ, նա խմցնելու որ քյե կոնախ անեմ:

Լաճն ի կասի. - Պառավ, աստված օղորմած ի, անոթի չինք մնա:

Կասի, ծեռ կզանի այբի աչիչ մեչեն մեյ ճանգյ ոսկի կխանի, կլցի պառվու փեշ, կասի. - Պառավ, դե կնա ինչ որ լազմ ի՝ առ:

Պառավն ի, որ ոսկիքյ կտեսնա, կառնի կէրթա շուկեն, խաց-պարիք կառնի, կուգյա տուն: Կպիրի, իրիկուն ի, կուտին, կխմին: Խաց ուտելուց սորա էսա լաճն ի, շատ կծարվնա, կասի. - Պառավ, մե կտոր ճյուր պե խմեմ:

Պառավն ի, ճյուր որտեղի՞ց, ըսդեխ կինի, էնդեխ կինի, ճյուր չի կանա ճարե, որ տա էսա լաճուն, որ խմի: Պառվու ճար կկտրի, թաս կառնի, կշռի մեչ թասին, կուտա էսա տղին: Էսա լաճն ի, կառնի թաս, կտանի պենին, որ պիտի խմի՝ շռախոտ կզանի քյթին:

Կասի. - Պառավ, էսա ճրից ի՞նչ կանդար շռախոտ կուգյա, էսա ի՞նչ տեսակ ճյուր ի:

Պառավն ի, կասի. - Բալամ, քյեզնից պախեմ, աստծուց ի՞նչխ պախեմ, մեր երկիր ճյուր չկա:

Լաճն ի, որ կլսի, կզարմանա, կասի. - Ի՞նչխ ճյուր չկա:

Պառավն ի, կասի. - Խա, մեր երկիր ճյուր չկա, մեր քյաղաքյ մեյ խատ ախպյուր կա, ինոր մեչն էլ մեյ խատ վիշապ կա, ըմեն օր մեյ խատ ախչիկ պիտի տանենքյ որ ուտի, որ մեյ կտոր ճյուր թողնի գյա: Էսօրն էլ սրեն իկեր ի թաքավորու ախչկան:

Սիրզա Մահմատն ի, որ էսա պան կլսի՝ պառվուն կասի. - Պառավ, տյու մեյ խատ արի՝ էտա ախպյուր ո՞րն ի, զիկ շանց տու:

Պառավն ի, կասի. - Խա, բալամ, ընչի՞ չէ, արի էրթանք՝ քյե շանց տամ:

Լաճն ի, կէլնի պառվու խետ մեյ դրա կէրթան, կխասնեն էդա ախպրի մոտ, կտիսնան, որ թաքավորու ախչիկ նստեր ի էդա տեղ, ընքյուտ-ընքյուտ կուլա, կմոմոա:

Լաճն ի, որ կխասնի էսա ախչկան մոտ, կտիսնա որ ախչիկ նստի ընքյուտ-ընքյուտ կուլա, կէրթա ախչկան մոտ, կասի. - Ա՜յ ախչիկ, մառսխ մ'անի, աստված օղորմած ի, վիշապ քյե չկանա ուտի:

Միրզա Մահմատն ի, կքաշի թուր. կչլտի կէրթա կմտնի մեյ խատ քյարիմ՝ իտև՝ կաչկի, խենքյ եվ վիշապ կէլնի տյուս:

Կեսօրին մեյ խատ ֆշշոյի ծեն մը կուգյա: Կէլնի կտիսնա, որ մեյ խատ վիշապըմ գյեռ ախպրի մեչեն վիզ էրկնցուցեր ի տյուս, որ ախչկան կուլ տա:

Համան Միրզա Մահմատն ի, թուր կքաշի կխասնի համան մեյ դռբիյ կզանի վիշապի գյլեռխ կթռուցի: Սորա կմոտանա վիշապի ջանդակ ախպրի ական մեչեն կքյաշի տյուս: Ջանդակ զմեն կկտռտի. կանի կիմա-կիմա, շան-ադվես կեր կանի:

Թաքավորու ախչիկն ի, որ էսա պան կտիսնա, ուր ծեռ կթաթխի էսա վիշապի ատրնի մեչ, կտառնա կզանի· լսճու քյամկի վերեն՝ նշան կանի:

Լաճն ի, վիշապի ջանդակ կտռտելուց սորա, կթռոնի կէրթա կմտնի էսա պառվու տուն:

Քյաղքյի ժողովուրդն ի, որ կլսի թե ասխպրի վիշապ սպաներ ին, խասնող պուտուկ, ճլոր առե, վազե իկե, որ ճյուր տանի: Կուգյան ասխպյուր, էտա արնաթաթախ ճյուր խասնող կտանի:

Թաքավորու ախչիկն էլ ուրախ-ուրախ կվազի կէրթա խոր մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես էկա:

Թաքավորն ի, որ ուր ախչկան կտիսնա, շատ կպարկանա վերեն, կասի. - Անամոթ, հայասզ, ի՞նչխ չես ամչնա, ալա իմ առճն կուգյաս, - դառնա կասի, - տյու վիրնի՞ց ավել իր, որ թողիր էկար, խազար խա՝ քյեզնից ավել խորոտ ախչիկներ կուլ տվե վիշապ, քյե էլ թող կուլ տեր, շա՞տ մախկուլ իր, ես ի՞նչ ջյույաբ տամ խալխին:

Ախչիկն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես քյո նամուսի դեմ պան չեմ արե: Ես ինչ որ ասրեր եմ աստծու մատով ի էլե, - կդառնա կասի, - էն քյո ասած վիշապ սպանվավ, ախպյուրն էլ սպանվավ, ես էլ ազատվա, ահալին էլ խետ զիկ, թող մկա ահալին բեռլ-բեռլ ճյուր խմի:

Թաքավորն ի, որ էսա պան կլսի, կկանչի ախչիկ, կնստցուցի ուր կշտի խետ, կասի. - Ի՞նչխ էլավ, բիթյուն պիտի մեյ-մեկ, մեյ-մեկ ասես:

Ախչիկն ի, ընցած, դառցածներ զմեն մեկիկ-մեկիկ կպատմի ուր խոր:

Թաքավորն ի, որ ուր ախչկան պատմութեն կլսի, կթռնի վեր, ախչկան իրեսներ կպաքյի: Կտառնա ախչկան կասի. - Բալամ, տյու էն տղին որ մկա տիսնաս, կճանչնա՞ս:

Ախչիկ կասի. - Խա, ես ինոր քյամկի վերեն ատրնով նշան իմ զարկե:

Թաքավորն ի, ամր կանի ուր դալլներաց, որ ինեն քյաղքյի մեչ, ինչ կանդար որ մարթ կա՝ կանչեն գյան թաքավորու սարի առճնեն մեյ-մեկ ընցնեն էրթան:

Թաքվորու ախչիյն ի, մեյ խատ խորոտ կարմիր խնձեոր կպռնի ծեռ, կայնի փենջարեն:

Էսա քյաղքյի մարթեր պիտի գյան բիթյուն էլ մեյ-մեկ թաքավորու սարի տկեն ընցնին, ախչիկ վուրուն որ իզարկ էտա կարմիր խնձեոր՝ էն ինոր փեսացուն պիտի էլնի:

Ջաղամաթն ի, կփոթնի կուգյա: Կուգյան թաքավորու սարի առնվեն բիթյուն կընցնին, էսա ախչիկ մեկին էլ խնձեոր չի թալե:

Թաքավորն ի, կասի. - Բալամ, էլ քյաղաքյ մարթ չմնաց, վո՞վ ի էտա վիշապ սպանող, որ չէկավ ընցներ:

Ախչիկն ի, կասի. - Չէ, թաքավոր ապրած կենաս, քյաղաքյ ալա շատ մարթ կա, դալալներաց ասա, թող խորոտ փտոին:

Թաքավորն ի, գյինա սամր կանի դալալներաց կասի. - Խորոտ փտոեք ալա մարթ կա քյաղաքյ, վով որ կընդնեքյ, առեքյ պիրեք:

Խաբար կպիրին թաքավորուն, կասին. - Թաքավոր ապրած կենաս, քյաղաքյ էլ մարթ չի մնացե, մենակ մեյ խատ պառավըմ կա, ինոր տուն մեյ խատ կարիր մ'իկե, գյեռ էն մեկ մարթն ի մնացե:

Թաքավոր սամր կանի, կասի. - Էտա մեյ մարթուն էլ կանչեքյ, թող գյա:

Կէրթան էտա մարթուն զոռով, յոլով կառնեն կպիրեն:

Ախչիյ ի, խեստ էսա լաճուն կտիսնա ուր ծեռաց տանեն որ զարկեր ի վեր քյամկին, կճանչնա, համան խնձեոր կթալի էսա լաճուն, կդառնա խոր կասի. - Թաքավոր ապրած կենաս, գյեռ էսա լաճն ի վիշապ սպանող:

Թաքավոր սամր կանի, կասի, որ էտա լաճուն պիրեն ուր մոտ:

Լաճն ի, կառնի թալած կարմիր խնձեոր, կէլնի դոդրի կէրթա մոտ թաքավոր:

Թաքավորն ի, խեստ էսա լաճուն կտիսնա, կխասնի ճակատ կպաքյի, դառնա կասի. - Է՛յ բաբագյիթ տղա, ես եմ, իմ մեկ ախչիկ, քյանի որ տյու ինոր վիշապի պեռնից ազատեցիր, զիկ էլ իմ ահալու առնն ամոթով չարիր, տյու զիկ լաճ, ես քյե խեր, իմ ախչիյն էլ կպսակիմ վեր քյե, իմ մեռնելուց սորա՝ կէլնես թաքավոր, իմ երկիր կկառավարես:

Էսա լաճն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես ջահել տղա իմ, օրըմ չէ՝ օրըմ պիտի պսայվեմ, էլ քյո ախչկնից դեռ խորոտ ախչիկ էլ չկանամ կնդնե, ամա ես մկա պսայվելու ժամանակ չունիմ, ես սալա մատաղի վերա եմ, չյուր իմ մուրազ չկատարվի՝ չիմ կանա պսայվե:

Ախչիյն ի, որ էսա խաբար կլսի՝ կբաշլայի լալ, կդառնա կասի.

- Է՛յ, բաբագյիթ տղա, խազար-խազար թաքավորու լաճեր իկեր ին, կնացեր ին, աչկ տրիր ին զիկ, աման տյու էլնես փեսացու՝ կպսայվիմ, չէլնես՝ չիմ պսայվի:

Էսա լաճն ի, որ կլսի ախչկա կասվի, կասի ինքուր. «Էս էլ եղնիկ ի, մուրազ ունի, իսոր խաթր չկոտրինքյ». կասի, մատի մատնիկ կխանի, կմտուցի ախչկան մատ:

Դառնա ախչկան կասի. - Քյանի որ տյու էտասկնա բախտով իս, զիկ քյառսուն օր պիտի աչկես, որ էկա՝ Էյ, զաթի քյո խեստ կպսայվիմ, որ չէկա՝ կիցի, որ մեռեր իմ, էլ զիկ չաչկես, քյո գյլխու ճարն արա:

Կասի, կէլնի կաց պարեով կանի, կխեծնի ուր ծին, կանչի ուր աստված, կինի՝ ուր ճամբախ, կէրթա:

Շատ կէրթա՜, քիչ կէրթա, կէրթա կխասնի մեյ խատ քյաղաքյըմ: Գյընա ծիյու գյլեռխ կթողնի պա՜ւյ, կասի. «Ծին մուրազ ի, ո՛ր տեղ որ կնա՜ւյ՝ էնտեղ կոնախ կէլնիմ»:

Ծին ի, կէրթա մեյ խատ պստիկ տռան առճև կկայնի:

Լաճն ի, կէճնի տակ ծիյուց, էտա տոտ կտփի, կտիսնա, որ մեյ խատ կուզյան պառավըմ կուգյա՜ տյուս:

Լաճն ի, կասի. - Պարև քյե պառավ, մսաֆր կուզե՞ս:

Պառավն ի, կասի. - Աստծու պարին, որդի, մսաֆր որ կա՝ աստծուն ի, աման նա՜ տեղ ունիմ՝ քյո ծիյուն, նա ուտելիք, որ քյե պուստիվ անեմ:

Լաճն ի, ծեռ կզա՜նի ա՜յբի աչկ, մեյ ճանգյ ոսկի կխանի, կլյի պառվու ծեռ, կասի. - Դե՛ կնա՜, ի՛նչ որ լազմ ի՝ առ:

Պառավն ի, որ էսա ոսկիքյ կտիսնա, ուրախութեն կէլնի խաղ: Ուր պուտուկ, ճլոր, ինչ որ կա՝ կխանի, կլյի տանիս, լաճուն էլ, ուր ծիյուն էլ տեղ կանի: Սորա կէրթա շուկիս ի՛նչ որ լազմ ի, կառնի, կպիրի: Իրիկուն կուտին, կխմին, կպառկին, կքյնին:

Առատուն էսա լաճն ի, կէլնի վեր, կէրթա՜ քյաղաքյ ֆռալ: Կտիսնա, որ քյաղքյի կես՝ տնիրաս վերեն կարմիր-կանաչ ին քյաշե, կուտին, կխմին, քյեֆ կանին: Կես տնիրաս վերեն էլ սև ին քյաշե, կուլնան, կմոմռան, սուքյ ին արի: Տղեն էսա պա՜ն որ կտիսնա, շատ կզարմանա՜ւ, ինք ուր կասի. «Էսա ի՞նչ բա՜ս ի»:

Կդառնա տուն:

Կուգյա տուն, պառվուն կխառնուցի, կասի. - Պառավ, էսա ծեր քյաղաքյ ի՞նչ բա՜ս ի, կես տնիրաս վերեն կարմիր-կանաչ ին քյաշե, քեֆ-ուրախութեն կանին, կես՝ սև ին քյաշե, կուլան, կմոմռան, սուքյ ին արի:

Պառավն ի, մեյ խատ «ա՜խ» կքյաշի, կասի. - Որդի, էլ մի խառնուցի, կազա՜պ իկե վեր մե: Սնոսգյեռվ մեր թաքավորուն, մեյ խատ ախչիկ կա, որ չուտես, չխմես, ինոր խորոտկութեն հա թամաշա անես: Ամեն օր մեյ խատ ջահել տղա խետ էսա ախչկան կպսայվի: Իրիկուն կէրթան կպառկեն, առատուն կէլնեն վեր, կտիսնան, որ տղա չկա, էլ ի՞նչխ կէլնին էտա տղեյներ՝ մարթ չի կիտե: Էն մայլեն որ սև ին կապե՝ էրեկվան փեսի մայլեն ի, որ կնա՜ւյ կուրիսավ, իտոր համար սև ին կապե, սուքյ կանին: Էն մեկել դիխ որ կարմիր-կանաչ ին կապե՝ քեֆ-ուրախութեն կանին, էն էլ էսաավուր փեսի մայլեն ի, որ թազա պիտի պսայվի, իտոր խամար կարմիր-կանաչ ին կապե, քյեֆ կանին:

Տղեն ի, որ էսա պան կլսի, կասի. «Ջայինամ հաքյի իմ էլնելան էլեր ի, մեկ օր էլեր իմ, մեկ օր էլ պիտի մեռնիմ, ես պիտի մնամ ըստեղ, խասկնամ թե՝ էսա ի՞նչ պանի, խենքյ իմ խելքյ ինչ կխասնի, կանամ մեչեն տյուս գյա»:

Կդառնա պառվուն կասի. - Պառա՛վ, վաղն էլ պիտի ես էրթամ թաքավորու ախչիկ ուզեմ, պսայվեմ:

Պառավն ի, էնկանդար կհամոզի լաճուն, որ էտա սավդիս վազ

անցնի, մյուշքով պրդյուռ ի, իր ջահելութեն ափսոս ի, ճար չէլնի խեփ, վերեն չկանա:

Լաճն ի, էն մեկել օր առափում մութ լյուսու կէլնի վեր, կէրթա թաքավորու սարի աթրաֆ կֆռա: Կտիսնա, որ էրեկվան մայլեն, որ կարմիր-կանաչ ին կապե, էսօր սև ին կապե, կուլան, կմռմռան:

Լաճն ի, կասի. «Վալա, էսա փեսեն էլ ի սպանվե»:

Կասի, կէլնի կէրթա դոդրի թաքավուրու սարեն: Կնստի վեր խնամախոսի քյուռսուն:

Թաքավրու խալայեղներ որ էսա լաճուն կտիսնան, խաբար կտանեն թաքավորուն, կասեն. - Թաքավոր ապրած կենաս, թազա փեսայու իկեր ի:

Թաքավորն ի, մռութ-մալուլ կուգյա էսա թազա փեսին կտիսնա, մեյ խատ «ա՜խ» կքյաշի, կդառնա կասի. - Էյ, ջահել տղա, ես կիրիշկամ քյո բարագիթութեն, ջիգյարս կկտռտվի, արե վազն արե պսայվելուց, խեղճ ես, մեղքյ ես, քյանի, քյանի քյե պես բարագիթ ջահելներ էկան, կուրիսան, կնացին:

Լաճն ի, կասի. - Չէ, թաքավոր ապրած կենաս, ես իկեր իմ, քյո ախչիկ կուզիմ, ես որ զիկ չիմ ափսոսա, տյու՞ զիկ կափսոսաս:

Թաքավորն ի, որ էսա պան կլսի, կասի. - Քյո մուր՝ քյո ճակատ. կնա, ախչիկս տվի քյե, թե որ կանաս վայելե՝ առ:

Լաճն ի, կէլնի կէրթա պառվու տուն, կասի. - Պառավ, ես գյեռ նշանվա թաքավորու ախչկան վերեն: Մայլեցոց ասա թող կարմիր-կանաչ կապին՝ քյեֆ անին:

Պառավն ի, կէլնի ուր թաղցոց խաբար կանի, բիթյուն կարմիր-կանաչ կքյաշին ուրենց տնիքաց վերեն, կուտին, կխմին, քյեֆ կանին:

Իրիկուն ի, լաճ կպսակին թաքավորու ախչկան խեփ, կառնին կէրթան էօդեն, որ տնեն մեյ տեղ:

Թաքավոր ուր ջաղամաթով կուգյան գյաղտիկ կիրիշկան, կտիսնան, որ լաճ, ախչիկ խալվներ կխանին, կպառկին:

Էսա լաճն ի ուր խալվներ խանելուց առաճ մեյ խատ էօդեն խորոտ թայիմին կանի: Կիրիշկա կտիսնա, որ քյառսուն տուտ կա մեչ էտա էօդին: Կմոտոխասնա. էն մեյ տուտ կպանա, կտիսնա ներս որ ի՞նչ. սադա ոսկի, առծաթ ի: Էն մեկել տուտ կպանա, կտիսնա որ սադա ակնունքյեղին ի: Էն մեկել էօդի դուռ կպանա, կտիսնա, որ սադա ատլաս-կումաշ ի: Վարհասլ, եռսյունյոթ տուտ կպանա, եռսունյոթ էօդեն էլ էտասկնա ատլաս, ոսկի, առծաթ, կումաշ ի լյուկ: Կմոտոխասնա էն մեկ տուռն էլ կպանա, կիրիշկա կտիսնա, որ ի՞նչ՝ սադա մարթու ջանդակ ի, աման իսկի վեր մեկուն էլ գյլեռխ չկա: Տղեն ի, մեյ խատ գյլեռխ իրար կուտա, կմոտոխասնա էն մեկել էօդի դուռ կպանա, կիրիշկա, տիսնա որ էն տեղն էլ զմեն մարթու գյլեռխ ի, սորա կմոտոխասնա իրվի դռան վերեն, որ ինոնց յաթղի մոտն ի, թաքավորու ախչիյն էլ էտա դռան յան պառկեր ի: Լաճն ի, կմոտոխասնա էտա

դուսն, դուռն էլ կպանա թե չէ՝ սկուն աչլաջեպ գյեշ խոտ կգանի ուր քյթին, որ քյիչ կմնա, որ խելքյ էրթա. ինի գյեփին: Էտա էոդեն էլ սկուն մութն ի, սկուն մութն ի, որ մատ մտուցես մարթու աչկ, մարթ չտիսնա, էոդի մեչիս էլ ծանտր ֆշոսի ծեն կուգյա: Լաճն ի, դուռ կքյաշի վերեն, ինքյ· ուր կմտածի, կասի. «Կա, չկա ստեղ պամ՝ կա»: Սորա ուր խալվներ կխանի, ուր ափան մեչ կկտրի, ադ-բիբար կլսի մեչ. թուր կչլտի կոնի մեչ ուր, մեչ ախչկան. արեն կպառկի:

Էսա լաճն ի ինչ լեզյու որ կթափսուսի թաքավորու ախչկան խեփ, որ խաբար տա, ճար չէլնի. էսա ախչիկ խաբար չի տա: Լաճն ի, կտիսնա որ ճար չկա, ախչիկ խեփ ուր խաբար չի տա. սուտ քյուն կտնի վերեն, կբաշլայի խուալ: Քիչըմ գյուխ թաքավորու ախչիկն էլ կքյնի: Կես կեշրին լաճ կտիսնա, որ էտա մութ էոդի տուռ կպասվի, մեյ խատ յոթ գլխեն դն կուգյա տյուս: Ուր յոթ գյլեոխն էլ մեյ-մեկ, մեյ-մեկ կմոտոխասսուսի թաքավորու ախչկան իրիսին սկուն կծծի, որ թաքավորու ախչկան իրիսի ռանգյ կկտրի, կէլնի տեպ տիղին: Սորա դն ծեռ կթալի դեխ լաճու գյլեոխ, որ պոնի: Լաճն ի, բիրդան կթոնի տեղիս վեր, կքյաշի մեյ խատ ուր թուր կգանի. խեփ որ կգանի՝ էսա դնու յոթ գյլեոխն էլ մեկիս կկտրի, սորա ջանդակ կպիրի կկտոտի, կանի կտոր-կտոր կիմա, կլսի էոդի մեյ քյեոշեն, չյուր խեփ ատքյին: Սորա որ թուր կսրբի, կուգյա կպառկի տեղաս մեչ:

Թաքավորու ախչիկն ի, որ կտիսնա թե լաճ դնուն սպանեց, կխասնի լաճուն կգրկի, ճակատ կպաքյի կբաշլայի նոր խեփ խաբար տալ, կասի. - Տյու խրեշտա՞կ իր, ի՞նչ իր, որ էկար էսա դնու ծեռիս զիկ ազատեցիր:

Լաճն ի, կդառնա ախչկան կասի. - Իրիկուն ես էնկանդար քյո խեփ խաբար տվի, տյու ի՞նչի զիկ իսկի ջյուցաբ չտվիր:

Ախչիյ կասի. - Տյու կիտես ես չուզե՞ խաբար տի. ես կուզի, ասան ի՞նչ խանի, դնու ախուն էր, որ խաբար չի տե: Էտա դն զիկ թամխեր էր, նա պիտի խեփ իմ փեսին խաբար տի, նա էլ էստեղաս սըռ ուրիշին ասի: Ես էլ իմ ջանի ախուն իմ ցավ քյաշեր ի իմ ատամ:

Էսա լաճ ինան ախչիկ իրարու վերեն շատ կուրախնան, չյուր լյուսու դեմ էրկսի քյուն էլ կտանի, կքյնին: Առատուն որ ասև կդեպնի, թաքավոր մարթ կէօրեոխկի վեր ուր ախչկան էոդի տոռան, տխանան խենքյ փեսեն յաթխի մե՞չն ի, թե չէ՝ կուրիսեր ի: Մարթն ի, կուգյա էոդի տուռ յավաշըմ կպանա, կտիսնա որ ի՞նչ. գյեռ յաթխի մեչ էրկու խատ գյլեոխ կպուկ ի իրար: Համսուն շոտրըմ տուռ կքյաշի վերեն, կվազի թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իմ ակնջկլես տուր, փեսետ սաղ-սալամաթ խեփ ախչկան պառկեր ին:

Թաքավորն ի, իսորա խաբրին չի ավատա, կէլնի ուր վազրին կէօրեոխկի: Վազիրն ի, կուգյա տուռ կպանա, կտիսնա, որ աղորթ՝ խարսն էլ, փեսեն էլ սաղ-սալամաթ պառկեր ին, քյներ ին: Կտիսնա էոդի օրթալաղն էլ յոթ խատ դնու գյլեոխ կա, մեյ քյեոշեն էլ ըսկուն

միս ի կեոլեոնՙուկ, որ էլեր ի խեւր առքյին: Վազեվազ կէրթա թաքավորու մոտ, ուր տեսած զմեն դողրիդան դողրի կպատմի:

Թաքավորն ի, որ էսա պան կլսի, ուրախ-ուրախ կէլնի, կվազի ուր ախչկան էօդեն: Կտիսնա, որ խարս-փեսեն էլեր ին վեր, գյեռ ուրենց խալվներ կխայնեն: Համան կխասնի, էրկսին էլ կգրկյի, ճակատներ կպագյի, կտառնա կխառոյուցի էսորանց, կասի. - Էսա ի՞նչ գյլեռխ ի, ի՞նչ ջանդակ ի, ի՞նչ պան ի:

Ախչիկն էլ ուր տեսածներ, ինչ որ ընցե, դասցե առաճվեն բիթյուն մեյ-մեկ կպատմի:

Թաքավորն ի, կդառնա, Միրզա Մահմատին կասի. - Էյ բաբագյիթ տղա, ես իմ, էսա իմ մեկ ախչիկ, քյանի խատ քյե պես ջահելներ էկան, չկառցան վայելին ինոր, աման տյու էկար, թե իմ ախչկան ազատեցիր, թե խեղճ անմեղ ջահելներաց ազատեցիր, որ պիտի գյին սպանվին տառտակ տեղ: Տյու զաթի պսայվեր ես, պոծեր ես, արե կաց էսատեղ, ես էլ ըխթիյարցեր եմ, իմ մեռնելուց սորա կէլնես թաքավոր, իմ ժողովուրդ կկառավարես:

Էսա լաճն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես քյո ախչկան սիրուն չէր, որ պսայվա: Ես ուզիցի իտոր սրո իմնալ, իմցա: Ամա քյանի որ պսայվեր իմ, իմ ասած՝ ասած ի, իմ կնիկ թող մնա մո քյե, ես ալա մուրազի վրա իմ, քյառսուն օր զիկ աչկեքյ, էկա՝ էկա, չէկա՝ կիտցեքյ որ մեռեր իմ, էն գյախ տյու կիտես, քյո ախչիկ. ի՞նչխ կիտես՝ սկուն արա:

Կասի, կաց պարև կանի, կէլնի կէրթա պառվու տուն, ուր ծին կխեծնի, սիլախներ կկապի, պառվուն էլ կաց պարե կանի, հայդե բաբամ, կինի ճամբախ, կէրթա:

Շատ կէրթա՝, քիչ կէրթա՝, կէրթա՝ կտիսնա, որ զատամանց դաշտի մը մեչ սիվտակ քյեռշկ-սարե մը կէրնա: Ծիյուն գյլեռխ կշիտկի դեխ քյեռշկ-սարեն: Կքշի, քիչ մ'էլ կէրթա՝, ծին պիրտան կկայնի: Էլ ինչ կանդար որ զանգյուն կգանի, ծին իրար չի դեպնի տեղեն:

Տղեն ի, շատ կպարկանան, կբաշլայի ծիյուն զոռ տալ, կամշի կգանի, ճար չէլնե: Բիրդան ծիյու լեզու կէլնի, կասի. - Էյ ախմախ մարթ, էտա ի՞նչ ի կանիս, կողերա կտոտիցիր է, զոռովեն պան կէլնի՞, էլ չեմ կանա առաճ էրթա:

Լաճն ի, կտիսնա, որ ծին խաբար կուտա, բիրդան զարգանդ կուտա վերեն, տրա ինքյ ուր կժողվի, կասի - Ապա ինչի՞ չես կանա առաճանա, մնաց էրկու ատքոմ տեղ որ խասնենք էնա սարեն, կէրթանք էսօր կմնանքյ էնտեղ, խորոտ կխանգստանանքյ, նոր էն մեկել օր կէլնենքյ կինինքյ ճամբախ:

Ծին ի, կասի. - Ես չիմ նիղայե, աման չեմ կանա առաճ էրթա՝, էսա խող որ կա՝ փերու խող ի, ես փերու խող ոտ չիմ կանա կոխե: Էճի տակ, տյու կնա իմ պոչից մեյ խատ էլ մազ քյաշի, տիր քյո ջեռպ, ես [illegible]. եվ կուզես զիկ կանչել, էն մազ տուր կրակ, ես կխասնիմ՝ Ես

կիտեմ, քյո փտռած Շահ Տոտիյեն էլ էտա սիվտակ քյեռշկի մեչն ի, կնա, տյու քյո բախտ, յան կպիրես, յան կմեռնես, կմնաս էնդեղ:

Լաճն ի, ծիյուց կէճնի տակ, ծիյու ճակատ կպաքյի, կասի. - Տե, էրթաս պարեով:

Ծին որ կէրթա, լաճ կնստի էտա տեղ կուշտմ կուլա, սիրտ կխովխրի, սորա կէլնի աչքեր կսրպի, կինի ճամբախ, կէրթա:

Շատ կէրթա, քիչ կէրթա, կէրթա կխասնի էտա սիվտակ քյեռշկ-սարեն: Կմոտոխասնա, կմտնի տուն, կէրթա մարմրե թարանջից որ վեր էլնի, ոտ կտնի վեր թարանջին, որ վեր պիտի էլնի, չկանա էլնի վեր, կասես թե մեկ կախվեր ի իտիվանց, փեշեր կքյաշի՝ չի թողնի:

Լաճն ի, ինչ կանդար որ կզոռի, մեյ խատ բիլա վեր չկանա էլնե: Բիրդան ծծղալու ծե'մ կինի իսրա ականջ: Գյլեռխ կվուրուցի վեր, կտիսնա որ ի՞նչ. մեյ խատ խուռնի-խրեղեն ախչիկըմ գյլեռխ փենջարից խանե տյուս, վեր ինոր կծծղա:

Խեստ որ էտա էրկսի աչկեր կառնի մեյ-մեկու, ախչիկ կասի. - Է՜յ, ջահել տղա, տու քյո խելքյով էտա թարանջեն պիտի ապանցրանա՞ս, գյաս վեր:

Տղեն ի, կասի. - Ես որ իմ խելքյով չիմ կանա պանցրանա, տյու էջի տակ, արե քյո խելքյով զիկ պանցրացու վեր՝ տիսնամ խենքյ:

Ախչիյն ի, որ էտա խաբար կլսի, շատ խոշին կուգյա: Կէջնի տակ, կուգյա լաճու ծեռ կպռնի, կխանի վեր, կտանի ուր էօդեն:

Էսա տղեն ի, որ կիրիշկա, էտա էօդի թար-թախմներաց խորոտկութեն որ կտիսնա՝ պերան կմնա պաց:

Ախչիյն ի կուգյա կնստի էսա լաճու կշտի խեստ, թե կթալի իսրա վզին, կասի. - Տյու զիկ կճանչնա՞ս:

Լաճն ի, մեյ խատ կիրիշկա էսա ախչկան իրես, կասի. - Չէ, ես քյե որ տե՞ղ կճանչնամ:

Ախչիյն ի, կասի. - Էն օր, որ տու ինան քյո մեր կնացեր իքյ դաշտ ցախ ժողվել, էն կիշեր էն ի՞նչ ուլնիկ ին, որ թափան քյո գյլխու վերեն:

Լաճ որ էսա պան կլսի, շատ կզարմանա, կասի. - Տյու որ տեղե՞ն կիտես էտա պան, չյուր մկա ալա մարթու չենք ասե:

Ախչիկ կծծղա, կասի. - Էն ուլնկներ որ էն օր ես լցի վեր քյո գյլխուն, էն օր ես քյե նշանեցի, արի զիկ փեսացու: Ես կիտեմ տյու ինչի՞ խամար ես իկե ըստեղ: Ես կիտեմ՝ տյու զիկ խամար չես իկե ըստեղ, տյու իկեր ես Շահ Տոտի խամար: Մառախ մ'ասե, Շահ Տոտիյեն մո զիկ ի, կուտամ՝ տանես: Ասան էսօր կաց ըստեղ, նստի խանգյաստացի, նոր վատ կէրթաս:

Էսա լաճ ինան ախչիկ կնստին մեյտեղ, կուտին, կխմին, քյեֆ կանին: Էն մեկել օր առատուն լաճ կասի. - Զիկ իրեք օր ժամանակ ի մնացե, որ իմ քյառատուն օր թմմի, ես էսօր անպատճառ պիտի էրթամ:

Էսա ախչիկն ի, կէլնի ուր խաս բախչի մեչեն մեյ խատ ոսկի կաֆասմ կպիրի, կուտա լաճուն, մեչ էտա կաֆասին մեյ խատ պստիկ խազարանմուշ գյոնսգյոն փիտուրներով խավքյ մը կեր:

Ախչիկ կասի. - Էսա խավքյն ի Շահ Տոտիյեն. էսա խավքյ որ կտանես կտնես քյո թաքավորու քյեռշկ-սարի փենջարեն, կպանաս էսա կաֆասի տուռ, էն կթոնի, կէրթա բախչի մեչ կֆռա, կերքի, բախչեն կկանաչի, էն էլմ'էլ կուգյա կմտնի ուր կաֆաս: Աման քյո խորոխպեր որ էսա պան տիսնա՝ ուր աչիչ քար չի տա: Թաքավորու առաճ քյե ամոթով անելու խամար կասի. «Ըտրսկնա՞ ախպոր տղա կէլնի, էն կանդար աշխարներ ֆռայիր, մեյ խատ չասիր՝ իմ խորոխպոր մեյ խատ ատիյաւ տանեմ»: Էսա ախչիյն ի, կասի. - Առ էսա սրմա արախչին, որ տյու քյո գյլեռխ տնես. ինչխ որ էսա թղթի մեչ կփաթյութեմ, քյե կուտամ, սկուն էլ կտանես, կուտաս խորոխպորտ:

Էսա ախչիկ կդառնա էսա լաճուն կասի. - Ես կիտեմ, որ էրթաս էն տեղ, թաքավոր քյե պիտի ասի. «Ա՜յ բաբագյիթ տղա, քյանի որ տյու էսա մարիֆաթ արիր, իմ խաս բախչեն արիր սկուն, ինչխ որ առաճվան ուես, ես ունեմ զաթի մեյ խատ ախչիկ, էն էլ կուտամ քյե, կէլնես իմ տղի տեղ, իմ մեռնելուց սորա իմ բիթյուն երկիրներ կկառավարես:

Ախչիկն էլմ'էլ կդառնա էսա լաճուն կասի. - Հա, քյե ասեմ, թե որ էտաս տիսակ պան կասի քյե, չէլնի ասես՝ չէ: Առ, պսայվի, մեկ օր կայ, էն մեկել օր առ խետտ, կնա մորտ էլ առ, կնա էն մեկել թաքավորու ախչկան խետն էլ պսայվի, քյանի որ խոսք ես տվե, էն տեղն էլ մեկ օր կմնաս, կառնես էն էլ, կուգյաս, կուգյաս էն մեկել թաքավորու մոտ, որ յոթ գլխեն վիշապ սպանեցիր, ինոր խետ զաթի պսայվեր ես, կառնես ինոր ախչիկն էլ, մեյ կիշեր էլ դա կմնաս, կառնես էն էլ, կուգյաս, կուգյաս իմ քյեռշկ-սարեն՝ մոտ զիկ:

Էսա փերու ախչիյն ի, էլ մ'էլ կասի. - Իսոնք ինչխ որ ասի, բիթյուն միտտ կպախես, որ անես. չէլնեմ չիմանամ, որ իմ ասածներից մեյ պան մոռնաս:

Էսա տղեն ի, բիթյուն պան կսեռտի մեչ ուր սրտին: Կդառնա փերու ախչկան կասի. - Տյու մառախ մ'անի, տյու ինչխ որ ասիր, բիթյուն մի-մեկ ուր տեղ կանեմ:

Միրզա Մահմատն ի, ուր ճամխի պատրաստութեն կտիսնա, էն մեկել օր կայ պարե կանի, կառնի կաֆաս, կինի ճամբախ:

Կէրթա, կէրթա չյուր փիրիի խողից տյուս կուգյա: Տյուս կուգյաւ թե չէ՝ ուր ծիյու մազ կուտա կրակ: Ծին էն թախկին կխասնի, կխեծնի, հայդե բաբամ, չյուր ուր թաքավորու մոտ, կէրթա կխասնի:

Թուքավորու վազիրն ի, որ կտիսնա ուր ախպոր տղեն՝ կանգյնա, մեկ օր ի պակաս մնայե, որ քյառսուն օր թմմի: Ինքյ ուր կասի. «Վալա, տղեն էլ չի գյա, ինոր էլած-չէլած էլ պիտի զավթեմ»: Ակուն որ ուրախութեն ոտկեր գյետին չառնե:

Բիրդան թաքավորուն խաբար կպիրեն, որ Միրզա Մահմատ էկավ:

Թաքավոր որ կլսի, շոտրմ խաբար կէօրեռխկի, որ գյա ուր մոտ:

Միրզա Մահմատն ի, գյալուն պես կէրթա դռղրի թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, քյո ուզած պիրի, ի՞նչ ուսմ կանես:

Թաքավորն ի, ուրախութնից կէլնի Միրզա Մահմատի ճակատ կպաքյի, կասի. - Միրզա Մահմատ, առաճ մեյ խատ իմ խաս բախչեն ուր առաճվա փաթաջին արա, որ ես միյամտվեմ:

Միրզա Մահմատն ի, փենջարեն կպանա, ոսկի կաֆասի տուռն էլ կպանա, խազար զյոնագոյն խավքյ կթռուցի: Էսա խավքյն ի, կթռնի կէրթա խաս բախչի աթրաֆ իրեք անգամ կֆռա, կդառնա կերգի, կթողնի կուգյա կմտնի ուր կաֆաս: Էսա խավքյն ի, որ չի երգե, էտա խաս բախչեն բիրդան ծառեր կկանչնան, ծաղկներ կծաղկեն, կէլնի ինչխ կասիս առաճ էր, կասիս իսկի մեյ պան էլ չի էլե:

Թաքավորն ի, որ էսա պան կտիսնա, շատ կուրախնա, կասի. - Ես իմ մեկ ախչիկ քյեզնից ավե՞լ մարթու պիտի տամ: Տյու պիտի էլնես զիկ փեսա, որ իմ մեռնելուց սորա իմ երկիր կառավարես:

Ամր կանի թաքավոր, որ խարսնսի թադարյուքյ տիսնան, կբաշլայեն ուտել-խմել, քյեֆ անել:

Թաքավորու վազիրն ի, որ էսա պան կտիսնա, կսկծու քիչ կմնա, որ պատռի: Թաքավորու ինան էտա ջաղամաթի առճև էսա լաճուն կուզի ամչցուցել, կդառնա Միրզա Մահմատին կասի. - Միրզա Մահմատ, էտասկնա ախպոր տղա կէլնեն, էնկանդար աշխար ֆռացիր, չասեցիր՝ մեյ խատ ծեռաց ալնախ մ'էլ առնեմ, տանեմ իմ խորոխպոր ատիյա:

Միրզա Մահմատն ի, ծեռ կզանի ջեռպ, արախչին կխանի տյուս, կասի. - Առ, խորոխպեր, մայար ես քյե մոռցե՞ր իմ, առ քյե էսա իմ ատիյեն:

Խորոխպերն ի, կառնի արախչին, կտիսնա, որ զմեն ոսկի թելից կարված ի, տեսակ-տեսակ ուլնկներով զարդրված ի, ուրախութնե արախչին կպոնի, կդնի գյլեռխ, խետ որ արախչին կդնի գյլեռխ, կբաշլայի մեղրի մոմի պես կխալի, կիրիցի՝ կէլնի մեկ պուռ մոխիր՝ կմնա գյետին:

Թաքավորն ի, որ կտիսնա էսա պան՝ կուրախնա, ուրախութնե կէլնի կկայնի, որ. կտտի վեր էսա մոխրին: Կդառնա կտրորի, կառնի մեչ ուր ափուն, կտանի .կուտա քյամուն: Կդառնա, կուգյա Միրզա Մահմատի ճակատ կպաքյի. - Ափարեմ Միրզա Մահմատ, մկա նոր իմցա, որ տյու թաքավորութնի լայեղ մարթ ես: Համան ինոր տեղն էր, որ կնայ: Սկուն շներայ խոդ բիլա ուր ծոց չառնե:

Մորա քյեֆ կանեն, կուտեն, կխմեն չյուր իրիկուն. էն մեկել օր խարսնիս կանեն, լաճ կպսակեն:

Իրիկուն որ լաճ ինան ախչիկ մեյ տեղ պիտի տնին, Միրզա Մահմատն ի կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես մեյ խատ պիտի էրթամ մեր տուն, իմ մոր տիսնամ:

Թաքավորն ի, կասի. - Որդի, տյու դյո՞ր կէրթաս, տյու թազա փեսա յիս, էսօր պիտի մնաս ստեղ, քյո կնգյան մոտ:

Միրզա Մահմատն ի, կասի. - Չէ, կէրթամ որ կէրթամ:

Կէլնի կուգյա ինոնց տուն, տել ալա տան թասրանջեն կես չէլե,

կտիսնա, որ մեկմ ուր ականջիս պոնե, կքյաշի. կիրիշկա կտիսնա, որ ի՞նչ. փերու ախչիյն ի:

Էսա ախչիյն ի, կասի. - Ես քյե քյանի պերան թամխեսի, տյու զիկ ինչի՞ ականջ չարիր, տե ետ դառսի, քյանի շոտ ի:

Միրզա Մահմատն ի, կասի. - Միտս չէր:

Կասի, կդառնա ետ, կէրթա թաքավորու տուն, ուր կնգյան մոտ:

Առատուն ի, Միրզա Մահմատ կէլնի վեր, կէրթա թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ամր արա, ես իմ կնիկ պիտի առնեմ էրթամ մեյ խատ էսա աշխար կան գյալ:

Թաքավորն ի, խաթրներաս չէլնի, իզին կուտա, կասի. - Կնաստեք, բալամներ:

Միրզա Մահմատն ի, կառնի ուր մեր ինան ուր կնիկ, կէլնեն կինեն ճամբախ, կէրթան: Կէրթա, էն էրկու թաքավորներու ախչկներն էլ կառնի, կէրթա դողրի դեխ փերու խող, ոտ կթալի փերու խող, կտիսնա որ ի՞նչ. փերին էն թարաֆեն խրեղեն ծիյերով մեյ խատ խորոտ փայթոնի մեչ նստե, կուգյա գյեռ իսոնց տեմ: Միրզա Մահմատն ի, կտիսնա, որ փայթոնի մեչ փերու ախչիյն ի:

Փերու ախչիյն ի, կուգյաս իսոնց մոտ, կառնի ուր փայթոնի մեչ, ուր մոր ինան կիյտերաս խեստ դողրի կէրթան ուրենց տուն: Տուն որ կխասնին, էսա փերու ախչիյն ի, խարսնսի պատրաստութեն կտիսնա: Սորա քյառսուն օր, քյառսուն կիշեր խարսնիս կանեն, էսա լաճ վեր էսա փերու ախչկան էլ կպսայվի:

Փերու ախչիյն ի, սկուն կարքյի կպիրի բիթյունին որ մեկ մեկելիս իսկի գյանգյատ չէլնե: Կդառնա Միրզա Մահմատին կասի. - Մենքյ չորսս էլ քյո կիհյտերն ենք, զմեն օր մեկի էոդեն պիտի էրթաս:

Միրզա Մահմատն ի, էլ ետ չդառնա, կմնա փերու խողի մեջ:

Ինոնք խասան ուրենց մուրազին, մենքյ էլ խասենքյ մեր մուրազին: